Պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2023 թվականի տեղեկատվական հարցումների տվյալների

Վանաձոր 2024

Հեղինակ՝ Զենֆիրա Վարդանյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ Հայաստանի, Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության և Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի ֆինանսական աջակցությամբ: Սույն տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակինն են, եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Նախաբան

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, մարդու իրավունքների պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով, տեղեկատվական հարցումներ է ուղարկում պետական տարբեր կառույցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին: Ստացված տեղեկություններն օգտագործվում են կազմակերպություն դիմած քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման կամ նրանց իրավունքի իրականացմանն ուղղված իրավական խորհրդատվության նպատակով: Այդ հարցումներին ի պատասխան ստացված գրությունները հնարավորություն են տալիս գնահատելու պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկության տրամադրման՝ օրենքով սահմանված նորմերի կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջների տեսանկյունից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 9 տարի շարունակ իրականացնում է նման ուսումնասիրություն և այս տարիների ընթացքում տեխնոլոգիական փոփոխությունների արդյունքում տեղեկատվության շրջանառությունը դարձել է ավելի դյուրին՝ ժամանակի խնայողության տեսանկյունից:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն էականորեն կրճատել է տեղեկատվական հարցումների ուղարկման և դրանց պատասխանների ստացման ժամանակահատվածները, քանի որ փոստային ծառայության համար նախատեսված 7 օրերը նույպես կրճատվել են: Արձանագրենք, որ պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարցումներին մեծամասամբ պատասխանել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները պահպանելով: Կազմակերպության կողմից հերթական ուսումնասիրությամբ ներկայացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կատարման վիճակը 2023թ.-ին՝ համաձայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ստացած պատասխանների:

Ուսումնասիրման մեթոդաբանությունը

Պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների կատարման վերլուծության նպատակով կազմակերպությունը մշակել և կիրառում է հետևյալմեթոդաբանությունը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տեղեկատվական հարցումները հիմնականում ուղարկվել են էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, այն է՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված պատասխանները, միաժամանակ հնարավորություն են տալիս գնահատելու նրանց կողմից տեղեկության տրամադրման՝ օրենքով սահմանված նորմերի կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջների տեսանկյունից: Հավաքագրված տեղեկությունը դասակարգվել է հետևյալ խմբերի.

- Ժամանակին ստացված են համարվում հարցումների այն պատասխանները, որոնք կազմակերպությունն ստացել է՝ էլեկտրոնային տարբերակի դեպքում 5 օրյա ժամկետում, փոստային ծառայության միջոցով 12 օրյա ժամկետում:
- Ուշացած են համարվում օրենքով սահմանված, ինչպես նաև կազմակերպության կողմից ողջամիտ համարվող ժամկետների խախտմամբ ստացված պատասխանները:
- Չպատասխանված են համարվում այն հարցումները, որոնց ընդհանրապես պատասխան չի տրվել՝ սույն տեղեկանքը հրապարակելու օրվա դրությամբ:

Տեղեկատվության բազան ստեղծվում է հետևյալ կերպ. հարցումների պատասխանները, ստացվելուն պես, մուտքագրվում են ՀՔԱՎ գրասենյակի հարցումների էլեկտրոնային բազա, որտեղ նշվում են հարցումների պատասխանների հասցեատերը, ուղարկողը, ուղարկման ամսաթիվը, հարցումների պատասխանների էլեկտրոնային տարբերակը: Աղյուսակը հասանելի է միայն ՀՔԱՎ գրասենյակի աշխատակազմին, կազմակերպության կողմից պահպանվում են տեղեկատվական անվտանգության կանոնների և անձնական տվյալների գաղտնիության պահպանման նորմերը: Տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա, տարեկան կտրվածքով, կազմվում է կատարված հարցումների վիճակագրություն:

2023թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկվել է 1046 գրություն, որոնցից 462 (44,18%) տեղեկատվական հարցումները հասցեագրվել են պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին. (2022թ. ուղարկված գրությունների թիվը կազմել է 671, որոնցից 258-ը (38,50%) տեղեկատվական հարցում):

Աղյուսակ 1. Կառույցներ, որոնց ուղարկվել է ավելի շատ թվով գրություններ

2022թ.		
	թիվ	%
Պաշտպանության նախարարություն	25	10%
Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ	37	14. 35%
Սոցիալական և առողջապահական բնագավառ	44	17. 06%
ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ	42	16.35%

2023թ		
	թիվ	%
Պաշտպանությանանախարարություն	63	17.97%
Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ	105	22.73%
Սոցիալական և առողջապահական բնագավառ	23	4.98%
ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ	71	15.37%

Ինչպես երևում է պատկեր 1-ից, 2023 թ.-ին կազմակերպության կողմից ուղարկված տեղեկատվական հարցումների ավելի մեծ բաժին ունեցող բնագավառներն են ՀՀ Պաշտպանության նախարարությունը (17. 97%), Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները (22,73%), ՀՀ Դատախազություն և նրա ստորաբաժանումները (16,3%) և Սոցիալական և առողջապահական բնագավառի հաստատությունները (4,98%): Ըստ այդմ թվարկված մարմիններին ուղղված տեղեկատվության հարցումները կազմում են ընդհանուր հարցումների 61,05%-ը: Նկատենք, որ թե 2023 թվականին, թե 2023թ.-ին ավելի մեծ թվով տեղեկատվական հարցումներն ուղղվել են նույն կառույցներին:

2023թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 462 տեղեկատվական հարցումներից ժամանակին են ստացվել 306-ը (66.24%), ուշացած 100-ը (21. 65%), իսկ 56 (12.13%) հարցման պատասխան չի տրվել:

Համեմատության համար նշենք, որ 2022թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 258 տեղեկատվական հարցումներից ժամանակին են ստացվել 181-ը (70.16%), ուշացած 37-ը (14.35%), իսկ 40(15.51%) հարցման պատասխան չի տրվել:

Այսինքն 2022 թվականի համեմատությամբ 2023 թվականին կազմակերպության տեղեկատվական հարցումներին ժամանակին պատասխանվածների տեսակարար կշիռը պակասել է 3. 92%-ով, ուշացրած պատասխանների տեսակարար կշիռն ավելացել է 10. 31%-ով, իսկ անպատասխան մնացած գրությունների տեսակարար կշիռը նվազել է 3. 6%-ով:

Պատկեր 1. 2022 և 2023թթ. Համեմատական դիագրամ





ՀՀ Արդարադատության բնագավառի մարմիններ

2023թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 462 տեղեկատվական հարցումներից 25-ը (5. 42%) ուղղված է եղել արդարադատության ոլորտին. (2022թ. այն կազմել է 8. 15%) 2023թ.-ին արդարադատության ոլորտից ժամանակին են ստացվել 18, ուշացված 2, և 5 հարցման պատասխան չի ստացվել: 2022թ-ին արդարադատության ոլորտից «ժամանակին ստացված» հարցումների պատասխանները 10-ն են՝ կազմելով այդ ոլորտին ուղարկված գրությունների 48%-ը: Ուշացած են պատասխանել 4 հարցման, անպատասխան է մնացել 7 գրություն:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	10	Ժամանակին	18
Ուշացած	4	Ուշացած	2
Չպատասխանված	7	Չպատասխանված	5

ՀՀ Ներքին գործերի նախարարություն և ստորաբաժանումներ

2023 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 462 տեղեկատվական հարցումներից 71-ը (15,37%) ուղղված են եղել ՀՀ ներքին գործերի նախարարությանը և նրա ստորաբաժանումներին (2022թ. դրանք կազմել են (5,45%) 258 հարցումներից 14-ը): 2023թ. ՀՀ ոստիկանության և նրա ստորաբաժանումների կողմից «ժամանակին» ստացված հարցումների պատասխանները կազմել են 72% (2022թ. «ժամանակին» են ստացվել ուղարկված հարցումների 42. 3%-ը): ՀՀ Ներքին գործերի նախարարություն ժամանակին է պատասխանել ուղարկված 30 հարցումներին, 36 հարցման պատասխանել է ուշացված, իսկ 5 հարցման պատասխան չենք ստացել:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	10	Ժամանակին	30
Ուշացած	3	Ուշացած	36
Չպատասխանված	1	Չպատասխանված	5

ՀՀ Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ. ուղարկված 462 տեղեկատվական հարցումներից 105- ն (22.73%) ուղղված են եղել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին (2022թ.-ին վերոհիշյալ կառույցներին ուղարկվել են 258 տեղեկատվական հարցումներից 37-ն (14,35%): 2023թ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակին ստացվել են 105 հարցումներից 83-ի պատասխանները (79.1%): Ուշացած պատասխանել են 8 գրության,և անպատասխան է մնացել 14 գրություն:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	29	Ժամանակին	83
Ուշացած	2	Ուշացած	8
Չպատասխանված	6	Չպատասխանված	14

ՀՀ Սոցիալական և առողջապահական բնագավառի մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ. ուղարկված 462 տեղեկատվական հարցումներից 23-ն (4.98%) ուղղված են եղել սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցներին (2022թ.-ին այն կազմել է 17.06% 258 հարցումներից 44-ը): Ուղարկված հարցումներից 17-ին այս ոլորտը պատասխանել է ժամանակին, 4 հարցումներին ուշացած, և ևս 2 հարցման պատասխան չենք ստացել:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	28	Ժամանակին	17
Ուշացած	8	Ուշացած	4
Չպատասխանված	8	Չպատասխանված	2

ՀՀ պաշտպանության նախարարություն և ստորաբաժանուներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ.-ին ուղարկված 462 տեղեկատվության հարցումներից83-ն (17,97%) ուղղված են եղել ՀՀ պաշտպանության նախարարությանը (2022թ. այն կազմել է 10.47% 258 տեղեկատվության հարցումներից 27-ը): 2023թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից և նրա ենթակառուցվածքներից «ժամանակին» են սաացվել 34, ուշացած 29, իսկ 20 հարցման պատասխան չենք ստացել: 2022թ.-ին 27 հարցումներից 15-ին պատասխանել են ժամանակին:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	15	Ժամանակին	34
Ուշացած	9	Ուշացած	29
Չպատասխանված	3	Չպատասխանված	20

ՀՀ Քննչական կոմիտե և ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ-ին ուղարկված 462 հարցումներից 17-ը (3,68%) ուղարկվել է ՀՀ Քննչական կոմիտե (2022թ.-ին այն կազմել է (6,21%) 258 հարցումներից 16-ը): Ուղարկված հարցումներից ժամանակին սաացվել է 15 ,ուշացած՝ 2, չպատասխանված հարցումներ 2023թ. չեն եղել:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	11	Ժամանակին	15
Ուշացած	1	Ուշացած	2
Չպատասխանված	4	Չպատասխանված	0

ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ-ին 462 տեղեկատվական հարցումներից 71-ը (15,37%),ուղարկվել են ՀՀ դատախազություն և ստորաբաժանումներ (2022թ-ին այն կազմել է 16,3% 258 հարցումներից 42-ը): Ժամանակին են ատացվել 62, ուշացված՝ 7,իսկ 2 հարցման պատասխան չենք ստացել: 2022թ. ուղարկված հարցումներից 38-ը ժամանակին են ստացվել, ուշացած 8-ը և 1-ը մնացել է անպատասխան:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	38	Ժամանակին	62
Ուշացած	3	Ուշացած	7
Չպատասխանված	1	Չպատասխանված	2

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ. ուղարկված 462 տեղեկատվության հարցումներից 21- ն (4,55%) ուղղված են եղել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը (2022թ.- ին այն կազմել է 5,05% 258 տեղեկատվական հարցումներից 13-ը): 2023թ. ուղարկված 21 հարցումներից 13-ին պատասխանել են ժամանակին, 5-ին ուշացած, 3-ը մնացել է անպատասխան:

2022թ.		2023թ	
Ժամանակին	10	Ժամանակին	13
Ուշացած	2	Ուշացած	5
Չպատասխանված	1	Չպատասխանված	3

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ. Ուղարկված 462 տեղեկատվության հարցումներից 5-ն (1.3%) ուղղված են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (2022թ.-ին այն կազմել է 1,95% 258 տեղեկատվական հարցումներից 5-ը): 2023թ. բոլոր հարցումներին պատասխանել են ժամանակին:

2022թ.		2023թ.	
Ժամանակին	5	Ժամանակին	5
Ուշացած	0	Ուշացած	0
Չպատասխանված	0	Չպատասխանված	0

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023թ. ուղարկված 462 տեղեկատվության հարցումներից 3-ն (0.65%) ուղղված են եղել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը (2022թ.- ին այն կազմել է 0.8% 285 տեղեկատվական հարցումներից 2-ը): 2023թ. ուղարկված 3 հարցումներից 2-ին պատասխանել են ժամանակին, 1-ը մնացել է անպատասխան:

2022թ.		2023թ	
Ժամանակին	2	Ժամանակին	2
Ուշացած	0	Ուշացած	0
Չպատասխանված	0	Չպատասխանված	1

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023 թվականին ուղարկված 462 տեղեկատվության հարցումներից 38-ն ուղարկվել են այլ կառույցների, մասնավորապես՝

- ՀՀ Վարչապետին ուղարկվել է 9 հարցում, որոնցից 5-ի պատասխանը ստացել ենք ժամանակին, մյուս 3-ը ուշացած,և 1-ին չի պատասխանվել
- ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն ուղարկվել է 5 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին։
- ՀՀ կադաստրի կոմիտե ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ուղարկվել է 8 հարցում, և բոլոր հարցումներին պատասխանվել է ժամանակին
- ՀՀ փոխվարչապետին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չի ստացվել
- ՀՀ Ֆինանսների նախարարություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ ուղարկվել է 1 հարցում և ժամանակին ստացվել է պատասխան
- ՀՀ փաստաբանների պալատ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չի ստացվել
- ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չի ստացվել
- ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- Հայաստանի Ապահովագրողների բյուրո ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական շտաբ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չի ստացվել

Ամփոփելով 2023թ. պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկատվական հարցումներին տրված պատասխաններն ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների, բաժանել ենք չորս խմբի ըստ նրանց տրված պատասխանների ժամանակագրական ճշտապահության՝

2023թ.-ին բոլոր տեղեկատվական հարցումներին ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են՝

- ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով
- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը
- ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը
- ՀՀ փաստաբանների պալատը
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը
- ՀՀ Կադաստրի կոմիտե
- Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
- «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
- ՀՀ Ֆինանսների նախարարություն
- Հայաստանի Ապահովագրողների բյուրո

Համեմատության կարգով նշենք, որ 2022թ.-ին միայն ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են եղել՝

- ՀՀ փոխվարչապետի գրասենյակ
- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը
- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը
- ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը
- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը
- Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակը
- ՀՀ փաստաբանների պալատը
- Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը
- ՀՀ անձնագրային և վիզաների վարչության Վանաձորի անձնագրային բաժանմունքը
- ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ-ը

Համեմատելով 2022 և 2023 թվականներին կազմակերպության կողմից տեղեկատվական հարցումներին

ժամանակին պատասխան տրամադրած կառույցների ցանկը, նկատում ենք, որ չորս կառույց կրկնվում է ցանկում՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Սա նախորդ՝ 2021-2022թթ. համեմատ շատ լավ ցուցանիշ է, քանի որ նախորդ տարի կրկնվում էր միայն մեկ կառույց՝ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությունը: Արձանագրենք նաև, որ 2022 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարությանն ուղղված 2 տեղեկատվական հարցումների պատասխանը ստացել ենք ժամանակին մինչ դեռ 2023թ.-ին ուղարկված 3 հարցումներից ժամանակին է պատասխանվել 2-ին, իսկ 1 հարցում մնացել է անպատասխան:

2023թ.-ին ժամանակին և ուշացած պատասխաններ տրամադրած կառույցներն են՝

- ՀՀ Քննչական կոմիտե

Համեմատության կարգով նշենք 2022թ.- ին ժամանակին և ուշացած պատասխաններ տրամադրած կառույցները են եղել՝

- ՀՀ Վարչապետը
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն

Հարկ ենք համարում շեշտել, որ 2023թ.-ին կազմակերպաության կողմից ՀՀ Վարչապետին ուղղված 9-ը հարցումներից 1-ը մնացել է անպատասխան, մինչդեռ 2022թ.-ին Վարչապետին ուղղված 3 հարցումներից 2-ին պատասխանը ստացել ենք ուշացած, 1 հարցման պատասխանվել էր ժամանակին և չպատասխանված հարցումներ չեն եղել:

2023թ.-ին ժամանակին, ուշացած և պատասխաններ չտրամադրած կառույցներն են՝

- ՀՀ Վարչապետը
- ՀՀ արդարադատության բնագավառի կառույցները
- ՀՀ դատախազությունն իր ստորաբաժանումներով
- ՀՀ սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցները
- ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները
- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը
- ՀՀ Ներքին գործերի նախարարությունն իր ենթակառուցվածքներով
- ՀՀ Պաշտպանության նախարարությունը
- ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Համեմատության կարգով նշենք, որ 2022թ.- ին ժամանակին, ուշացած և պատասխաններ չտրամադրած կառույցները եղել են՝

- ՀՀ արդարադատության բնագավառի կառույցները
- ՀՀ դատախազությունն իր ստորաբաժանումներով

- ՀՀ հատուկ քննչական ծառայություն (ՀՀ Հակոռուպցիոն կեմիտեն)
- ՀՀ ոստիկանությունն իր ստորաբաժանումներով
- ՀՀ սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցները
- ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները
- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը
- ՀՀ Դատական դեպարտամենտը
- ՀՀ քննչական կոմիտեն
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունը
- ՀՀ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը

Ինչպես տեսնում ենք և՛ ժամանակին, և՛ ուշացած, և՛ չպատասխանված գրությունների խմբում կառույցների ցանկը մասամբ կրկնվում է, և սա փաստում է այն մասին, որ կառույցները չեն վերանայում իրենց վերաբերմունքը տեղեկատվական հարցումներին պատասխանելու ժամանակագրության պահպանման վերաբերյալ:

2023թ.-ին ուշացած և պատասխաններ չտրամադրած կառույցներն են՝

- ՀՀ փոխվարչապետ
- ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը
- ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը
- ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե
- Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական շտաբ

Համեմատության կարգով նշենք, որ 2022թ.- ին ուշացած և պատասխան չտրամադրած կառույցը եղել է՝

- ՀՀ ԱՆ դատաբժշկական գիտագործական կենտրոնը

Այսպիսով, ինչպես նախորդ տարի այնպես էլ 2023 թվականի որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկատվական հարցումներին ամենաշատ թվով ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են: Այս տարի ցանկին ավելացել են նաև ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որը 2022 թվականին 2 հարցումներից մեկին պատասխանել էր ժամանակին իսկ մյուսը մնացել էր անպատասխան:

2023 թվականի վիճակագրական դիագրամ



2022 թվականի տեղեկանքում վերլուծել էինք պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը մինչհեղափոխական և հետհեղափոխական ժամանակահատվածում, և ըստ ժամանակագրական պատկերի՝ ժամանակին տրամադրված պատասխանների տեսակարար կշռի ավելացման տենդենց չեր դիտվում հետհեղափախական շրջանում, և 2023 թվականին այդ տենդենցը դեռևս պահպանվում է։